

Մեկնարկել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովը

<http://mtad.am/hy/news/item/2018/06/29/mtadforum29/>

29.06.2018

Այսօր Երևանում մեկնարկել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովը՝ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակում» խորագրով:

Համաժողովը կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունների կողմից համատեղ՝ «Ռոսկոնգրես» հիմնադրամի աջակցությամբ:

Համաժողովում կհնչեն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի ուղերձները:

Ելույթներով հանդես կգան

- Վլադիմիր Ռոստիսլավովիչ Մեդինսկի - ՌԴ մշակույթի նախարար
- Մուրեն Պապիկյանը - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար
- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների ղեկավարներ:

Միջոցառումը նվիրված է գյուղատնտեսական արդյունաբերության, տրանսպորտի, զբոսաշրջության, հումանիտար համագործակցության ոլորտներում զարգացող թվային տնտեսության պայմաններում երկու երկրների տարածաշրջանների առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը:

Միջոցառմանը կմասնակցեն Հայաստանի և Ռուսաստանի ոլորտային նախարարությունների ներկայացուցիչներ, երկու երկրների գործարար շրջանակների ներկայացուցիչներ, տարածաշրջանների ղեկավարներ:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովներն սկսել են անցկացվել 2011թ-ից՝ Հայաստանի մարզերի ու Ռուսաստանի ռեգիոնների միջև տարբեր ուղղություններով համագործակցության խորացման ու զարգացման հարցերի քննարկման նպատակով: Երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով առկա է փոխգործակցության մեծ ներուժ, և համաժողովները խնդիր ունեն նպաստել այդ ներուժի բացահայտմանը, միջտարածաշրջանային մակարդակով գործակցության նոր ուղղությունների նախանշմանը, նոր կապերի հաստատմանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ ֆորումի մասնակիցներին

<http://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/29/Nikol-Pashinyan-message-29.06.18/>



Ֆորումի հարգելի մասնակիցներ և հյուրեր,

Ջերմորեն ողջունում եմ ձեզ «Ռուսաստանի և Հայաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակում» թեմայով Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ ֆորումի շրջանակում:

7 տարի առաջ՝ 2011 թվականին, Հայաստանը և Ռուսաստանը նախաձեռնել են հայ-ռուսական ֆորումի անցկացումը, որը գործնականում միավորել է Հայաստանի մարզերի և Ռուսաստանի շրջանների, ինչպես նաև հասարակությունների և տարածաշրջանային բիզնեսի ներկայացուցիչներին:

Նման պարբերականությունը, կլոր սեղանների շրջանակում քննարկվող լայն թեմաներով պլանավորված, դիտարկում ենք որպես հայ-ռուսական ռազմավարական փոխգործակցության հերթական դրսևորում: Ավելին, այսօր միջտարածաշրջանային համագործակցությունը դարձել է դրա անբաժանելի մասը:

Մեր երկրների առջև ծառայած են հիմնականում հավակնոտ խնդիրներ՝ ապահովելու առավալագույն հարմարավետ պայմաններ մեր քաղաքացիների կյանքի, բիզնեսի կազմակերպման, նոր արտադրությունների թողարկման համար, ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր ոչ միայն մայրաքաղաքներում, այլ նաև շրջաններում: Մա այն է, ինչին նպատակաուղղված են համապատասխան պետական ծրագրերը և հենց դրանցով են մոտիվացված կոնկրետ քայլեր՝ ուղղված շրջաններին ավելի բարենպաստ ստարտային պայմանների ներկայացմանը՝ տարբեր առևտրատնտեսական, մշակութային և հումանիտար ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

Արագ փոփոխվող իրողությունները ձևավորում են նոր խնդիրներ՝ ընդգծելով նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությունը, որոնց մեծ մասը վերաբերում է թվային օրակարգին: Հավատում ենք, որ մեր երկրների կողմից իրականացվող թվային օրակարգը, որը համաձայնեցվել է Եվրասիական տնտեսական միության շրջանակում, թույլ կտա ոչ միայն կրճատել վարչական ծանրաբեռնվածությունը, համագործակցությանը հաղորդել ավելի ժամանակակից և թափանցիկ բնույթ, այլ նաև զգալիորեն կկրճատի գաղափարի ծագման և դրա իրականացման ժամանակը, նվազագույնի կհասցնի աշխարհագրական հեռավորությամբ պայմանավորված ծախսերը:

Ակնկալում ենք, որ ֆորումի անցկացմանը, որը չի սահմանափակվում պլենար նիստերով, այլ ներառում է նաև մի շարք թեմատիկ կլոր սեղաններ, կհետևի նման նախաձեռնությունների աճը:

Եվ այդ ձգտումները մենք կպաշտպանենք պետական մակարդակով՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ ներուժի բացահայտման և միջտարածաշրջանային համագործակցության արդյունավետության բարձրացման, տարածաշրջանների կայուն զարգացման համար: Երիտասարդ սերունդը պետք է շարունակի հայ-ռուսական համագործակցությունը և հանդես գա այն ընդլայնելու նոր նախաձեռնություններով: Ողջունում ենք ակտիվ երկխոսությունը, մեր եղբայրական երկրների երիտասարդների միջև ուսանողական փոխանակումները: Իմ կողմից ղեկավարվող Հայաստանի նոր կառավարությունը վճռական է նոր խթան հաղորդել հայ-ռուսական բարեկամական հարաբերություններին, և հատկապես միջտարածաշրջանային համագործակցությանը, քանի որ երկրի հավասար զարգացումը հանդիսանում է առաջանահերթ ուղղություն մեզ համար:

Հույս ունեմ, որ ֆորումի ընթացքում ներկայացված առաջարկությունները կգտնեն իրենց գործնական կիրառումը, կծառայեն խնդիրների լուծմանը, կնպաստեն հեռանկարային բիզնես և ներդրումային ծրագրերի իրականացմանը՝ ի շահ մեր երկրների ու ժողովուրդների: Ֆորումի բոլոր մասնակիցներին և հյուրերին մաղթում ենք բեղմնավոր քննարկումներ, հետաքրքիր հաղորդակցություն և ամենայն բարիք:

Հայաստանի և Ռուսաստանի միջև ուրվագծվում են միջտարածաշրջանային համագործակցության նոր հնարավորություններ. Սուրեն Պապիկյան

<http://mtad.am/hy/news/item/2018/06/29/mtadforum291/>

29.06.2018

Երևանում այսօր մեկնարկել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարությունների կողմից համատեղ անցկացվող ամենամյա հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովը: Համաժողովի լիագումար նիստին ներկա են գտնվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը, ՌԴ մշակույթի նախարար Վլադիմիր Մեդինսկին, ՀՀ և ՌԴ դեսպանները, մարզպետներ, ՌԴ նահանգների բարձրաստիճան ներկայացուցիչներ, այլ պաշտոնատար անձինք, գործարար ու հասարակական շրջանակների ներկայացուցիչներ:

Համաժողովի մասնակիցներին և հյուրերին իրենց ուղերձն են հղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինը: ՀՀ վարչապետն իր ուղերձում ընդգծել է, որ Հայաստանի՝ իր կողմից ղեկավարվող նոր կառավարությունը, վճռական է տրամադրված լրացուցիչ ազդակ հաղորդել հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու միջտարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը, և նմանօրինակ համաժողովները մեր երկրների միջև դաշնակցային փոխգործակցության ամրապնդման կարևոր գործիք են: «Մեր երկրների առջև մեծամասամբ ծառայած են միատեսակ խնդիրներ՝ մեր քաղաքացիների համար ապահովել կյանքի, բիզնեսի վարման, նոր արտադրություններ կազմակերպելու առավելագույն հարմարավետ միջավայր, տարածաշրջանների զարգացման համար ստեղծել առավել բարենպաստ մեկնարկային պայմաններ: Ուստի կարծում եմ՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համակարգվող և մեր պետությունների կողմից կենսագործվող թվային օրակարգը թույլ կտա կրճատել վարչական ծանրաբեռնվածությունը, միջտարածաշրջանային համագործակցությանը կհաղորդի առավել ժամանակակից ու թափանցիկ բնույթ: Վստահ եմ, որ համաժողովին հնչած առաջարկություններն ու մոտեցումները կգտնեն իրենց գործնական կիրառումը, կծառայեն առաջադրված խնդիրների լուծմանը, կնպաստեն հեռանկարային գործարար ու ներդրումային

ծրագրերի իրագործմանը՝ հանուն մեր եղբայրական երկրների և ժողովուրդների»,- ասված է վարչապետի ուղերձում:

ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինն իր ուղերձում կարևորել է միջտարածաշրջանային համաժողովի շրջանակներում հասարակական, բիզնես հանրությունների, պետական կառավարման մարմինների մեկտեղման արդեն կայացած ավանդույթը, որի միջոցով քաղաքական երկխոսության, հումանիտար, գիտատեխնիկական և տնտեսական համագործակցության զարգացման նոր ուղիներ են նախանշվում: Նախագահ Պուտինը համոզմունք է հայտնել, որ համաժողովի ընթացքում կյանքի կկոչվեն նոր հետաքրքիր գաղափարներ, որոնք իրենց նպաստը կբերեն Հայաստանի և Ռուսաստանի միջև դաշնակցային կապերի հետագա ընդլայնման, ինչպես նաև եվրասիական տարածաշրջանում փոխշահավետ ինտեգրացիոն նախագծերի իրականացման գործում:



«Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը իր և նախարարության անունից ողջունել է հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովի մասնակիցներին ու հյուրերին և նկատել, որ համաժողովի հանդեպ բարձր հետաքրքրվածությունը, պետական գործարար և հասարակական շրջանակների ակտիվ ներգրավվածությունն առաջին հերթին վկայում են հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների բարձր մակարդակի, ինչպես նաև տարածաշրջանային հարթության մեջ գործնական տնտեսական կապեր, նոր հարաբերություններ ու ծրագրեր հաստատելու մարդկանց անկեղծ ձգտման մասին: «Տարածքների համաչափ զարգացումը, տարածաշրջանային անհավասարության բացառումը և ապակենտրոնացված միջտարածաշրջանային համագործակցությունն առաջնահերթ խնդիրներ են համարվում ՀՀ կառավարության համար: Հենց այդ պատճառով մենք միասին պետք է փնտրենք համագործակցության ճանապարհներ և

հնարավորություններ՝ ինչպես պետական մակարդակով, այնպես էլ՝ մասնավոր հատվածի: Համոզված եմ, որ կազմակերպական հարցերի արդյունավետ լուծման դեպքում մենք ականատեսը կդառնանք նոր համատեղ ինովացիոն ծրագրերի մշակման և իրագործման», - նշել է նախարար Պապիկյանը՝ համաժողովի մասնակիցներին մաղթելով արգասաբեր և արդյունավետ աշխատանք: Իր հերթին ՌԴ մշակույթի նախարար Վլադիմիր Մեդինսկին, արժևորելով Ռուսաստանի և Հայաստանի միջև ռազմավարական գործընկերային հարաբերությունների բնույթը, շեշտել է, որ դրանք արդեն հարյուրամյակներ շարունակ զարգանում են բարեկամության, իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա:



Այնուհետև ՀՀ ՏԿԶ նախարար Սուրեն Պապիկյանի և ՌԴ մշակույթի նախարար Վլադիմիր Մեդինսկու ներկայությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը և ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունների արտաքին տնտեսական գործունեության զարգացման և կառավարման դեպարտամենտի տնօրեն Վիտալի Գուդիինը ստորագրել են Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև միջտարածաշրջանային համագործակցության ծրագրի 2018-2021թթ. իրականացման միջոցառումների ծրագիրը: Համաձայնագիր է ստորագրվել նաև տեղեկատվական անվտանգության ոլորտում Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և ռուսական Այ Բի իսթի միջև փոխգործակցության վերաբերյալ:

Համաժողովի շրջանակում կկազմակերպվեն թեմատիկ քննարկումներ:


Ակտիվ թեմատիկ քննարկումներ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովին

<http://mtad.am/hy/news/item/2018/06/29/mtad29.04/>

29.06.2018

Երևանում այսօր մեկնարկած ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունների կողմից համատեղ անցկացվող ամենամյա հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովի ընթացքում անցկացվել է լիազուգույն նիստ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակներում» թեմայով:

Օրակարգային հարցերի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի համանախագահությամբ կայացել է ՌԴ և ՀՀ միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում գործող հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության համատեղ աշխատանքային խմբի հինգերորդ նիստը, որի արդյունքներով համանախագահներ Վաչե Տերտերյանը և Վիտալի Գուդիլինը ստորագրել են հինգերորդ նիստի արձանագրությունը:



Համաժողովի ժամանակ կազմակերպվել են նաև «Թվային օրակարգ` մարզերի հայացքը», «Երևան-Մոսկվա. խելացի քաղաքներ, խելացի լուծումներ», «Ագրոարդյունաբերական համալիրի թվայնացում», «Զբոսաշրջության ոլորտի զարգացումը թվային տնտեսության ձևավորման պայմաններում» և «Սոցիալական ցանցերի և թվային տարածության հանրահռչակությունը` որպես երիտասարդության միտումները որոշող գործոն» խորագրերով կլոր-սեղան հանդիպումներ: Կլոր-սեղան քննարկումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ մարզերի և ՌԴ նահանգների պաշտոնյաներ, գործարար և հասարակական շրջանակների ներկայացուցիչներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներ, որոնց ընթացքում քննարկվել են միջտարածաշրջանային կոոպերացիայի զարգացման

հնարավորություններին, թվային տնտեսության պայմաններում տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման ուղիներին, գյուղատնտեսության ոլորտում հայ-ռուսական համագործակցության ներուժի ակտիվացմանը, ինչպես նաև զբոսաշրջության և ծառայությունների ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանն ուղղված մի շարք հարցեր:

Հիշեցնենք, որ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովներն անցկացվում են 2011 թվականից ի վեր և նպատակ ունեն միջտարածաշրջանային հորիզոնական շփման ձևաչափով որակական նոր մակարդակի բարձրացնել երկկողմ հարաբերությունները, խորացնել ու զարգացնել ՀՀ մարզերի ու ՌԴ ռեգիոնների միջև տարբեր ուղղություններով առկա համագործակցության ներուժը, ինչպես նաև հնարավորությունների նոր հորիզոններ ստեղծել ապակենտրոնացված փոխգործակցության համար: